Հավելված 4

Նախագիծ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Երևան 2023թ.

Սույն փաստաթուղթը կազմվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի և ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	3
Ներածություն	4
Մեթոդաբանություն	6
1. Դիլիջան համայնքի ընդհանուր նկարագիրը	7
2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Դիլիջան համայնքում	12
3. Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ	12
4. «Դիլիջան» ազգային պարկ	17
5. Արդյունաբերություն	21
6. Կոմունալ ծառայություններ և թափոններ	21
7. Համայնքի հողային ռեսուրսներ	24
8. Համայնքային բյուջեի մասին	25
9. Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը	25
10. Դիլիջան համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագիրը	28
11. Եզրակացություն	29
12. Առաջարկություններ Դիլիջան համայնքի ՏԻՄ-ին	31
Հավելված 1	33
Հավելված 2	34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանը միջին լեռնային անտառային գոտու տիպիկ կլիմայական առողջավայր է միջին և բարձր լեռնային կլիմայով, բարենպաստ թթվածնային ռեժիմով, լանդշաֆտային առանձնահատկություններով, բուժիչ հանքային ջրերով: Դիլիջան համայնքի բնական հարստություններից է անտառային յուրօրինակ համակարգը, որի պահպանման համար ստեղծվել է «Դիլիջան» ազգային պարկը: Հարուստ բնությունը որոշիչ է դարձել Դիլիջան համայնքի՝ զբոսաշրջային ուղղությամբ զարգացման համար: Զբոսաշրջության հետ միասին եկամտի աղբյուր է անտառը՝ որպես մատչելի վառելանյութի և շինանյութի, ուտելի բույսերի և խոտաբույսերի աղբյուր: Սակայն անտառի նկատմամբ ճնշումները հանգեցրել են սաղարթի փոփոխությունների, անտառային էկոհամակարգի դեգրադացման և կենսաբազմազանության ոչնչացման: Անտառահատումների հետևանքով ակտիվացել են սողանքները, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքին: Փոխվում է տեղի կլիման: 2022թ. ամառային օրերի ընդհանուր թվի նորմայից շեղումով Դիլիջանը հանրապետության երկրորդ համայնքն էր Թալինից հետո: Նվազել է տեղումների քանակը, միայն 2022թ. ամսական տեղումների քանակը Դիլիջանում կազմել է ՀՀ նորմայի 43%-ը: Ավելացել են կարկտահարության դեպքերը:

Դիլիջան համայնքի գետային էկոհամակարգի վրա ճնշում են գործում փոքր ՀԷԿ-երը. դերիվացիոն խողովակաշարերի անցման տարածքներում գետերը մնում են սակավաջուր կամ ընդհանրապես անջուր: Վատանում է փոքր ՀԷԿ-երի շահագործման տակ գտնվող գետային հատվածի սանիտարական վիճակը: Փոխվում է տեղի միկրոկլիման, ոչնչանում է գետային ձկնաշխարհը: Վերգետնյա խողովակաշարերը խանգարում են վայրի կենդանիների տեղաշարժին:

ՀՀ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում կլիմայական, վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և էներգախնայողության քաղաքականությունների իրականացմանը: Դրանց անմիջական կրողները համայնքներն են, որոնք, այդ թվում Դիլիջան համայնքը, ինստիտուցիոնալ առումով լիարժեք մասնակից չեն այդ քաղաքականությունների կյանքի կոչման ծրագրերին:

Անհրաժեշտ է այդ քաղաքականություններն ակտիվորեն տեղայնացնել համայնքներում՝ ապահովելու կլիմայական ռիսկերի նկատմամբ դիմակայունություն, էներգետիկ աղքատության, անտառի նկատմամբ ճնշման նվազեցում, միջազգային պարտավորությունների կատարմանը համայնքային մասնակցություն:

«ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և առաջարկվող միջոցառումները» հաշվետվության նպատակն է.

- նպաստել Դիլիջան համայնքի լիարժեք ներգրավմանը և իր շահերի պաշտպանությանը կլիմայական և էներգետիկայի ոլորտների պետական

քաղաքականությունների վերաբերյալ որոշումների և համայնքին վերաբերող որոշումների ընդունման գործընթացում:

- Աջակցել համայնքի սոցիալական, էկոլոգիական և տնտեսական զարգացմանը՝ հասնելու կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության կրճատման:

- Մշակել առաջարկություններ համայնքի կլիմայի փոփոխության հարմարվողականության, կանաչ էներգետիկայի և կանաչ աշխատատեղերի ստեղծման, համայնքի կայուն զարգացման համար:

«ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և միջոցառումները» հաշվետվության կառուցվածքը

1.«Դիլիջան համայնքի ընդհանուր նկարագիր» բաժնում ներկայացվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի աշխարհագրական դիրքի, կլիմայի, բնակչության զբաղվածության, սոցիալ-տնտեսական խնդիրների, հնարավորությունների, իրավակարգավորումների մասին հակիրճ տեղեկատվություն:
2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Դիլիջան համայնքում բաժնում ներկայացված են կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման հնարավորությունները:
3. Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ բաժնում ներկայացված են համայնքում իրականացվող էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումները, վերականգնվող էներգետիկայի զարգացման միտումները, փոքր ՀԷԿ-երի խնդիրները, իրավակարգավորումները, առաջարկվող լուծումները:
4. «Դիլիջան» ազգային պարկ բաժնում ներկայացված են պարկի կլիմայակարգավորիչ դերի, մարդածին ճնշումների ազդեցության, ապօրինի անտառահատումների, ազգային պարկում զբոսաշրջության կազմակերպման վերաբերյալ տվյալներ:
5. **Արդյունաբերություն** բաժնում ներկայացված են Դիլիջան համայնքում շահագործվող հանքային ջրերի հանքավայրերի և ոչ մետաղական հանքի շահագործման տվյալներ, իրավակարգավորումներ:
6. **Կոմունալ ծառայություններ և թափոններ** բաժնում ներկայացված են համայնքի աղբահանության, աղբավայրի մասին տվյալներ, առկա խնդիրները և առաջարկվող լուծումները:
7. **Հողային ռեսուրսներ** բաժնում ներկայացված են Դիլիջանի հողային ռեսուրսների տվյալները՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության:
8. **Համայնքային բյուջեի մասին** բաժնում նկարագրված է Դիլիջան համայնքի 2022թ. բյուջեն, տրված է եկամտային և ծախսային մասերի վերլուծությունը:
9. Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը բաժնում ներկայացված է

իրականացվող և նախատեսվող սուբվենցիոն ծրագրերի կլիմայական և էներգետիկ ուղղվածության վերլուծությունը:
10. Դիլիջան համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագիրը բաժնում ներկայացված են Դիլիջան համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերը և առկա խնդիրները:
11. Եզրակացություն բաժնում ներկայացված են Դիլիջան համայնքում կլիմայական և կանաչ էներգետիկայի քաղաքականության տեղայնացման խնդիրները:
13. Հավելվածներ:
Հավելված 1. Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ:
Հավելված 2. Դիլիջան համայնքի փոքր ՀԷԿ-երի ցուցանիշները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության կազմման տեղեկատվական հենք են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Տավուշի մարզպետարանի, Դիլիջան խոշորացված համայնքի պաշտոնական կայքերը, Էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը: Համայնքի մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օգտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, հարցումներ, քննարկումներ ոլորտային մասնագետների, ֆոկուս խմբերի և ՏԻՄ-ի հետ: Քննարկումներին մասնակցել է 17 մարդ, հարցազրույցներ անցկացվել է 8 անձի հետ, հարցումներին մասնակցել է 18 անձ:

Նկար 1. «ԷկոԼուր»-ի թիմի հանդիպումները, հարցազրույցները, քննարկումները Դիլիջան համայնքում

1. ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Դիլիջան խոշորացված համայնքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի հարավ-արևմտյան մասում, հարավից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի մարզին, արևմուտքից՝ Լոռու մարզին:

Դիլիջան խոշորացված համայնքում ընդգրկված է Դիլիջան քաղաքը և 8 գյուղ՝ Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Հովք, Խաչարձան, Ճերմակավան և Գեղատափ:



Նկար 2. Դիլիջան համայնքի բնակավայրերի տեղադիրքը

Դիլիջան համայնքը զբաղեցնում է 63316.93 հա տարածք: Այն գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի պահպանման գոտում:

Բնակչության թիվը (01.01.2023թ. դրությամբ) 26701 է[1]: Համայնքի 782 ընտանիք ընդգրկված է ընտանեկան նպաստ ստացողների ցուցակում:

Դիլիջան համայնքի գետերը քաղցրահամ են, տիպիկ լեռնային, հոսում են ձորակներով: Դիլիջանի միջով հոսում է Աղստև գետը ՝ Դիլիջան, Գետիկ և Բլդան վտակներով: Աղստև գետի ջրահավաք ավազանը Հայաստանի սահմաններում կազմում է շուրջ 1610 կմ^2: Համայնքում գետակների ընդհանուր քանակը հարյուրից ավելի է: Տարածքում շատ են նաև հանքային աղբյուրները: Արդյունաբերական նշանակություն ունի Բլդանի աղբյուրը, որը հայտնի է «Դիլիջան» անվամբ:

Համայնքի տարածքում գտնվում են Պարզ լիճը և Գոշի լիճը, որոնք զբոսաշրջիկների սիրելի վայրերից են:

[1] https://www.dilijancity.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291

Նկար 3. Պարզ լիճ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով՝ 2022թ. 4-րդ եռամսյակում Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հատվածում և Դիլիջան քաղաքից ներքև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նկար 4. Աղստև գետ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միավորված ազգերի զարգացման ծրագրի, «Կոկա-Կոլա» կորպորացիայի Եվրասիայի և Մերձավոր Արևելքի բաժանմունքի և Դիլիջանի քաղաքապետարանի միջոցներով իրականացվել են հոսքաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ Աղստև գետի վրա: Հոսքաջրերի մաքրման կայանը ներկայում չի աշխատում:

Գործողություն
Անհրաժեշտ է վերականգնել հոսքաջրերի մաքրման կայանը՝ բացառելու կոյուղաջրերի հոսքն Աղստև գետ, բարելավել աղբահանության գործընթացը և իրականացնել խստացված վերահսկողական միջոցառումներ՝ բացառելու գետի աղտոտումը կենցաղային թափոններով:

1.1 Բնակչության զբաղվածությունը

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ, զբոսաշրջությամբ, անտառային բարիքների հավաքչությամբ և վաճառքով: Մի մասն էլ աշխատում է ձեռնարկություններում և հիմնարկներում:

Կանանց հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, տնային տնտեսությամբ: Կանանց պրոֆեսիոնալ զբաղվածությունն ավանդաբար դաստիարակչական, կրթական ոլորտներում է՝ նախակրթարաններում և դպրոցներում:

Գործողություն
Կանանց այն ռեսուրսը, որն ունի կրթական բարձր մակարդակ և ազդեցություն բնակչության լայն շերտերի վրա, պետք է օգտագործել համայնքի կյանքում որոշումների ընդունման գործընթացում:

Ներկայում համայնքում գործում է 478 իրավաբանական անձ և ձեռնարկություն, որոնցից 105-ը հյուրանոցներ և ռեստորաններ են: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Անհատ ձեռնարկատերերը 419-ն են: Համայնքում ստեղծվել է տուրիզմի զարգացման տեղեկատվական կենտրոն:

Դիլիջանում կան ձեռնարկություններ, որոնք զբաղվում են փայտամշակմամբ՝ օգտագործելով ինչպես ներմուծված փայտանյութ, այնպես էլ Դիլիջանի անտառների արժեքավոր փայտանյութը:

Դիլիջանում զբաղվում են քարի վերամշակմամբ:[2] Գործում են «Դիլիջան» հանքային ջրի գործարանը, «Դիլիջան», «Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ-ները:

Համայնքում գործում է 8 հասարակական կազմակերպություն:

Դիլիջան համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի համաձայն՝ գործազուրկների թիվը եղել է 3569:

«ԷկոԼուր»-ի հարցումների համաձայն՝ համայնքը կարիք ունի նոր աշխատատեղերի ստեղծման, եկամտի նոր աղբյուրների ապահովման:

[2] Դիլիջանի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագիր, էջ 10



Նկար 5. Դիլիջան համայնքի զարգացման վերաբերյալ հարցվածների կարծիքների բաշխում

1.2 Համայնքի կլիման

Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնանտառային չափավոր, զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարին՝ 0-ից –2: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Դիլիջանում ամառային օրերի ընդհանուր թիվը 2022 թ. նորմայից ավելի է եղել 45 օրով[3]: Այս ցուցանիշով Դիլիջանը 2022թ. հանրապետության երկրորդ համայնքն է Թալինից հետո (71 օր):

[3] http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf

Նկար 6. Դիլիջան քաղաք

Աղստև գետի ջրային ելքը նվազել է՝ 2022թ. կազմելով նորմայի 73.7%-ը: Աղստևի վտակ Գետիկ գետի ջրային ելքը 2022թ. նվազել է՝ կազմելով նորմայի 68.8%-ը:

Ըստ Դիլիջանի հիդրոօդերևութաբանական կայանի տվյալի՝ ուժեղ երաշտ գրանցվել է 2022թ. հուլիսի 21-31-ին:

2022թ. ամսական տեղումների քանակը Դիլիջանում կազմել է նորմայի 43%-ը:

Խոշոր սողանքների վայրեր են Դիլիջան քաղաքը, Հաղարծին գյուղը, Պարզ լիճը[4]: «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թթ. կառավարման պլանի միջոցառումների ծրագրի համաձայն՝ կլիմայական պայմանների փոփոխությունները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են սելավների և սողանքների ակտիվացմանը:

Դիլիջան համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի համաձայն՝ 2011թ-ից Դիլիջան քաղաքում իրականացվում է հակասողանքային միջոցառումների մեծ ծրագիր: Երկու փուլով իրականացվել են 927 գծամետր թունելախորշերի վերականգնման աշխատանքներ: 2016թ. սկսվել է երրորդ փուլը, որով 537 գծամետր հակասողանքային թունել է կառուցվել, որի ավարտմամբ ստեղծվել է նաև հակասողանքային դրենաժի հուսալի համակարգ:

Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 1.9 կետի՝ մշակվել է Տավուշի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նախագիծը:

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների և հանդիպումների արդյունքում պարզվել է,

[4] «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագիր

որ օդի ջերմաստիճանի բարձրացման, ձյան տեղումների պակասի, խոնավության նվազման արդյունքում դիտվում է մրգերի, մշակովի և վայրի հատապտուղների, կարտոֆիլի, լոբազգիների, եգիպտացորենի բերքատվության անկում, ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի, ճագարվերի գլխաքանակի մոտ 70%-ով կրճատում, կաթնատվության նվազում, մարդկանց առողջական վիճակի վատթարացմամբ:

Դիլիջանի տարածքում ակտիվ սողանքներն առաջացնում են ենթակառուցվածքների զարգացման և սոցիալական խնդիրներ, ստեղծում սպառնալիք համայնքի բնակչության անվտանգության համար:

2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2014թ. Դիլիջան քաղաքը միացել է ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին: Սակայն նրա մասնակցությունը ներկայում կասեցված է:[5] Պատճառներից մեկը Կայուն էներգետիկ զարգացման պլանի բացակայությունն էր:

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների արդյունքների համաձայն՝ համայնքում Էներգախնայողության և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում կլիմայի փոփոխության դիմակայությանը ջերմոցային գազերի նվազեցմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը ցածր է. հարցվածների 55,5%-ն այդ մասին տեղյակ չէ, մնացածի մոտ տեղեկատվությունն ամբողջական չէ:

Քաղաքապետերի դաշնագրին միանալը հնարավորություն կտա գնահատել Դիլիջանի պատրաստվածությունը՝ իրականացնելու սոցիալ-էկոլոգիական, էներգետիկ, կլիմայական միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները, հնարավորությունները և բարելավելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակը: Այն կապահովի համայնքի կայուն, կանաչ զարգացումը և կնպաստի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած ԱՍԳ[6] պարտավորությունների կատարմանը:

3. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Դիլիջան համայնքում էներգետիկ կարիքների համար օգտագործվում է բնական գազ, էլեկտրաէներգիա, վառելափայտ:

Դիլիջանում իրականացվել են էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներ: Հայաստանի վերականգնվող

[5] http://www.minenergy.am/page/567
[6] https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/

էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (R2E2) Դիլիջան քաղաքում իրականացրել է փողոցային լուսավորության ծրագիր[7] և Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցում էներգախնայողության միջոցառումներ։[8]

Նկար 7. Շահագործումից հանված լամպեր Դիլիջան քաղաքում

Իրականացվում է թվով 11 բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացման ծրագիր։

Դիլիջան համայնքի 2022-2027 թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի ՀՈԱԿ-ներում՝ մարզադպրոց, երաժշտական դպրոց, Երկրագիտական թանգարան, Թեղուտի ակումբի շենք, թիվ 1, 2, 3 մանկապարտեզներ, Հաղարծինի մանկապարտեզ, արևային ֆոտովոլտային կայանների կառուցում։

Դիլիջան քաղաքում բացվել է արևային էներգիայով սնուցվող հանրային տրանսպորտի առաջին կանգառը։ Կանգառում ստեղծվել է դրանից սնվող անվճար լիցքավորման հնարավորություն համայնքի բնակիչների համար[9]։ Սակայն այդ համակարգը ներկայում չի աշխատում։

«ԷկոԼուր»-ի հարցումների արդյունքում պարզվել է, որ տնային տնտեսություններում օգտագործվող էներգակիրների դիմաց կատարվող տարեկան ծախսերը կազմում են. վառելափայտ՝ ամռանը՝ 10 000, ձմռանը՝ 100 000 -110 000 դրամ, բնական գազ՝ ամռանը՝ 10 000, ձմռանը՝ 65 000 դրամ։ Քաղաքում ջեռուցման նպատակով հիմնականում էլեկտրաէներգիա չի օգտագործվում, սակայն մասնավոր հատվածում այն կազմում է՝ ամռանը՝ 5 000, ձմռանը՝ 45 000 դրամ։

[7] https://r2e2.am/am/2017/02/02/dilijan-city-street-lighting/
[8] https://r2e2.am/am/2017/02/02/dilijan-basic-school-no-2/
[9] https://www.facebook.com/MunicipalityOfDilijan/posts/2241919682691524/?paipv=0&eav=Afb9UYIgyZB8Ikhhiv4wLC45AxYdygceIRDbyML0bUhWn1nALnUda5IR



Նկար 8. Էներգախնայողությանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հարցվածների կարծիքների բաշխումը

Ցածր մակարդակի վրա է նոր տեխնիկական միջոցների խնամքի և վերականգնման ծառայությունների մատուցումը: Անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսներ նախատեսել այդ համակարգերի տեղադրումից հետո դրանց պահպանման և վերանորոգման ծախսերի համար:

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների արդյունքների համաձայն՝ էներգետիկայի ոլորտում անհրաժեշտ է նվազեցնել բնական գազի և էլեկտրաէներգիայի համար ծախսերը սեփական հողմային/արևային էլեկտրակայանի շահագործման շնորհիվ:

Հիդրոէներգետիկա

Դիլիջան համայնքում գործում է 4 փոքր ՀԷԿ՝ ընդհանուր 7,169 կՎտ հզորությամբ: Դրանք կառուցված են Աղստև, Գետիկ, Խաչարձան, Նորգետիկ գետերի վրա: (Տե՛ս Հավելված 2)

«Աղստև-1» և «Խաչարձան» փոքր ՀԷԿ-երի ենթակառուցվածքները գտնվում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում և խախտում են «Դիլիջան» ազգային պարկի պահպանման ռեժիմը: Փոքր ՀԷԿ-երի ձկնանցարանները լրացուցիչ դժվարություններ են ստեղծում գետերում բնակվող ձկների տեղաշարժերի համար, ինչի հետևանքով նվազում է գետային ձկնաշխարհը:

Նկար 9. Փոքր ՀԷԿ «Դիլիջան» ազգային պարկում

Նկար 10. Փոքր ՀԷԿ-ի վերգետնյա խողովակաշարերը՝ «Դիլիջան» ազգային պարկում

Իրավական կարգավորում

2019թ. հունիսի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 30.1 հոդվածի համաձայն[10]՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են, եթե՝

1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝

ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր

բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է

գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր, և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը

2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝

ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում

բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում

գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում

[10] https://www.arlis.am/documentview.aspx?docid=132103

դ. ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում
ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում
զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ
է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 8-ի 488-Ն որոշմամբ[11] մերժվում է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը 25 գետերի վրա փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար: Այդ գետերի ցանկում են Աղստևը, Գետիկը:

2015 թ. հունիսի 23-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՕ-103-Ն օրենքը, որի համաձայն՝[12] բացառությամբ արևային, հողմային, երկրաջերմային և կենսազանգվածի էներգիայի, արգելվում է էլեկտրաէներգիայի արտադրությունը: Միաժամանակ, օրենքում ամրագրված է, որ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը նախկինում տրամադրված էլեկտրաէներգիայի արտադրության գործունեություն իրականացնող անձինք, ինչպես նաև կառուցման փուլում գտնվող փոքր հիդրոէլեկտրակայանները շարունակում են իրենց գործունեությունը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի համաձայն՝ ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում է ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն, իսկ հոդված 20-ով բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

2022թ. հուլիսի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն բնօգտագործման վճար կգանձվի հիդրոէլեկտրակայաններից 1 խմ-ի համար 0,1 դրամի չափով: Օրենքն ուժի մեջ կմտնի 2024թ. հունվարի 1-ից[13]:

[11] https://www.arlis.am/documentview.aspx?docID=151502
[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=99182
[13] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166211

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վերլուծության ու հաշվարկների համաձայն՝ 2017-2019թթ.-ին հիդրոէլեկտրակայանների կողմից օգտագործված ջրի ծավալը միջինում կազմել է 6,2 միլիարդ խմ: Հետևաբար, սահմանված դրույքաչափով բնօգտագործման վճարներից պետբյուջեի մուտքերը տարեկան կավելանան մոտավոր 620 միլիոն դրամով:

Համայնքում գործող փոքր ՀԷԿ-երը ստեղծում են խնդիրներ Աղստև, Գետիկ, Նորգետիկ, Խաչարձան գետերի էկոհամակարգերի համար, խոչընդոտում են ձկների և վայրի կենդանիների ազատ տեղաշարժը, խախտում են «Դիլիջան» ազգային պարկի պահպանման ռեժիմը:

Փոքր ՀԷԿ-երի շահագործումը խախտում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 17-ի և 20-ի պահանջները:

4. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

Դիլիջանի անտառները հիմնականում ընդգրկված են «Դիլիջան» ազգային պարկի կազմում, որի տարածքը 33765 հա է: Ազգային պարկի հարակից պահպանման գոտում տեղակայված Դիլիջան քաղաքը և 9 գյուղական բնակավայրերը տեղաբաշխված են երեք տարբեր մարզերում, ինչը որոշակի խնդիրներ է առաջացնում տեղական իշխանությունների և ազգային պարկի միջև փոխհարաբերություններում:

Նկար 11. «Դիլիջան» ազգային պարկ

«Դիլիջան» ազգային պարկը հարուստ է հաճարենու և կաղնու մեզոֆիլ անտառներով: Այստեղ է գտնվում կենու եզակի պուրակը: «Դիլիջան» ազգային պարկում պահպանվում են 977 տեսակի բարձր անոթավոր բույսեր, 220 տեսակի ողնաշարավոր կենդանիներ:

«Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցումը Հայաստանում» ծրագրի շնորհիվ Դիլիջանի անտառ է վերադարձել ազնվացեղ եղջերուն: Ծրագիրն իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (BMZ)՝ KfW զարգացման բանկի միջոցով, WWF Գերմանիայի և Կովկասի բնության հիմնադրամի (CNF) աջակցությամբ:

4.1 Ճնշումներ «Դիլիջան» ազգային պարկի վրա

Անտառահատումներ

Ըստ ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության[14]՝ «Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» սեկտորից ածխածնի երկօքսիդի կուտակման ծավալները նվազել են՝ 2010թ. -550.1 Գգ CO_2 համ-ից 2019թ. հասնելով -373.0 Գգ CO_2 համ-, ինչ վկայում է անտառների՝ ջերմոցային գազի կլանման ունակության կտրուկ նվազման մասին:

Աղյուսակ 2. ԶԳ արտանետումներն ըստ սեկտորների, 1990-2019թթ., Գգ CO_2 համ.

Սեկտոր	1990	1995	2000	2005	2010	2012	2014	2016	2017	2018	2019	2019թ. արտանետումների փոփոխությունը (%)՝ համեմատությամբ		
												1990	2000	2017
Էներգետիկա	22,719.4	4,819.1	4,255.1	5,252.6	5,809.6	6,891.8	7,041.5	6,623.4	7,087.4	6,822.3	7,138.5	-68.6	67.8	0.7
Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում	630.9	122.5	152.6	395.8	588.6	713.9	816.5	797.4	951.9	1174.2	1285.3	103.7	742.3	35.02
ԳԱՏԱՀ (առանց Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում ենթաեկտորի)	2,045.5	1,874.4	1,276.8	1,551.8	1,524.1	1,873.2	2,048.1	2,258.4	1,941.9	1,829.9	2,098.3	2.6	64.3	8.1
Թափոններ	418.8	454.5	513.8	560.3	567.2	584.4	601.3	611.4	622.7	628.7	628.7	50.1	22.4	0.97
Ընդամենը ԶԳ արտանետումներ	**25,814.5**	**7,270.5**	**6,198.4**	**7,760.4**	**8,489.5**	**10,063.3**	**10,507.4**	**10,290.6**	**10,603.9**	**10,455.0**	**11,150.8**	**-56.8**	**79.9**	**5.2**
Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	-736.9	-514.4	-467.8	-523.7	-550.1	-516.2	-477.6	-487.9	-470.4	-455.2	-373.0	-49.4	-20.3	-20.7
Զուտ ԶԳ արտանետումներ	**25,077.6**	**6,756.1**	**5,730.6**	**7,236.7**	**7,939.4**	**9,547.1**	**10,029.7**	**9,802.7**	**10,133.5**	**9,999.8**	**10,777.8**	**-57.0**	**88.1**	**6.4**

Չնայած պահպանության խիստ ռեժիմին՝ «Դիլիջան» ազգային պարկում կատարվում են ապօրինի անտառահատումներ, որոնք ոչնչացնում են ազգային պարկի կենսաբազմազանությունը և ընդհանուր անտառային էկոհամակարգը:

Ըստ «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թթ. կառավարման պլանի միջոցառումների ծրագրի՝ տեղի բնակչությունը վառելափայտը պատմականորեն ձեռք է բերել ազգային պարկի տարածքից, և վառելափայտի օգտագործման ծավալը յուրաքանչյուր տնային տնտեսության կողմից տարեկան կազմում է 10մ^3-30մ^3: Պահանջվող վառելափայտի ծավալն ավելին է օրինական առաջարկվող վառելափայտի և թափուկի ծավալից:

2022թ. «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար ընդհանուր բոլոր հատումներից տարեկան առաջադրանքը կազմել է 9805.18խմ, որից 4192.37խմ՝ քամատապալ ձյունակոտոր ծառերի հատումներից և 5612.81խմ՝ թափուկ փայտանյութ: Բոլոր

[14] https://drive.google.com/file/d/1zVwXLYeg4ng74sMnzWt4E4jXmxrkVZxv/view?pli=1

հատումներից շինափայտի ելքը կազմել է 502.3խմ: Փաստացի մթերման ծավալները կազմել են 6946.78խմ, որից 2229.6խմ՝ քամատապալ ձյունակոտոր ծառերի հատումներից, 125.68խմ՝ այլ հատման նպատակով և 4591.44խմ՝ թափուկ փայտանյութ: Բոլոր հատումներից շինափայտի ելքը կազմել է 146խմ:[15] Արդյունքում, ըստ պաշտոնական աղբյուրի, «Դիլիջան» ազգային պարկից ավելի քիչ փայտանյութ է դուրս բերվել, քան նախատեսված է եղել առաջադրանքով:

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ում միայն 2022թ. հայտնաբերվել է սաղարթի փոփոխության 29 օջախ[16], ապօրինի անտառհատումների 8 տարածք:[17] 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնկվել է 6 հրդեհ, և այրվել է 168.61 հա այլ բուսածածկ տարածք: «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում գարնանային և աշնանային ստուգումների արդյունքում հայտնաբերվել են ընդհանուր թվով 146 հատ ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ 234.14խմ ծավալով, որոնց բոլորի համար կազմվել են անտառխախտման արձանագրություններ:

«ԷկոԼուր»-ի հարցման արդյունքների համաձայն՝ «Դիլիջան» ազգային պարկում նվազել են ապօրինի հատումները: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունն ապօրինի անտառօգտագործման ոլորտում՝ ներգրավելով տեղի ակտիվիստներին, կատարել անտառվերականգնման աշխատանքներ: Բնակչության շրջանում անհրաժեշտ է անցկացնել բացատրական աշխատանքներ:

Խնդիր

Հիմնական վառելափայտի ծավալը հաշվարկված չէ:

Անտառհատումների, կլիմայի փոփոխության արդյունքում փոփոխվում է ազգային պարկի սաղարթը: Միայն 2022թ. «Դիլիջան» ազգային պարկում հայտնաբերվել է ապօրինի անտառհատումների 8 տարածք:[18] «Դիլիջան» ազգային պարկը տուժում է հրդեհներից: Այս ամենը հանգեցնում է անտառի՝ ջերմոցային գազերի կուտակման ունակության կրճատման և կլիմայի փոփոխության ակտիվ դրսևորումների:

Համայնքի բնակավայրերում գործում են փայտամշակման ձեռնարկություններ: Ըստ Դիլիջանի ՏԻՄ-ի ներկայացուցչի՝ հումքը ներկրվում է դրսից: Սակայն չի բացառվում, որ հումքի մի մասը կարող է լինել նաև «Դիլիջան» ազգային պարկի անտառանյութը:

[15] ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին 2022թ. տեղեկագիր
[16] http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf
[17] http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf
[18] http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf

Խնդիր
Հաշվի առնելով, որ փայտամշակման ձեռնարկություններն օգտագործում են նաև «Դիլիջան» ազգային պարկից դուրս բերվող փայտանյութը, հնարավոր է շահերի բախում համայնքում գործող փայտամշակման բիզնեսի և «Դիլիջան» ազգային պարկի միջև:

«Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականությունը, ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրի» նախագծի համաձայն՝ նախատեսվում է մթերվող բնափայտի ընդհանուր ծավալում շինափայտի մասնաբաժնի ավելացում և փայտամշակման փոքր արտադրությունների զարգացում:

Գործողություն
Առաջարկել Շրջակա միջավայրի նախարարությանը կատարել փոփոխություն «Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականությունը, ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրի» նախագծում, ինչը կբացառի մթերվող բնափայտի ընդհանուր ծավալում շինափայտի մասնաբաժնի ավելացումը փայտամշակման փոքր արտադրությունների զարգացման համար, քանի որ առկա է արժեքավոր ծառատեսակների հատման ռիսկ:

4.2 Անտառվերականգնում

2022թ. «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Դիլիջան տեղամասի 8-րդ քառակուսում «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի կողմից իրականացվել են անտառվերականգման աշխատանքներ, ցանկապատվել է 20 հա տարածք և այդ տարածքում իրականացվել է 8 հա ցանք և 2 հա հարթակների կառուցում:

4.3 Զբոսաշրջություն

ՀՀ 2014-2025թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով» (2014թ.) նպատակադրվել է մինչև 2025թ. ապահովել միջազգային զբոսաշրջային հոսքերի տարեկան 8-9% աճ՝ հասցնելով զբոսաշրջիկների թիվը 2.7 միլիոնի: Առանձնահատուկ նշանակություն է տրվել զբոսաշրջային մի շարք կենտրոնների, այդ թվում՝ Դիլիջանի զարգացման ծրագրին[19]:

Գեղատեսիլ անտառային վայրերում զբոսաշրջության ծավալների աճը բնական էկոհամակարգերի վրա մարդածին ծանրաբեռնվածության ավելացման պատճառներից է: Նման տարածքներում հաճախ գրանցվում են մի շարք խնդիրներ՝ ռեկրեացիոն ծանրաբեռնվածության հետևանքով տարածքում ծառերի և բնական վերաճի վնասում, աղբոտում, հրդեհառաջացման ռիսկերի

[19] https://www.e-draft.am/projects/4359/about#_Toc100823078

ավելացում, սանիտարահիգիենիկ կանոնների խախտումներ, հողածածկի խաթարում:

Խնդիր

Զբոսաշրջության զարգացումն ուղեկցվում է ԲՀՊՏ-ի նկատմամբ ճնշումներով: Ծանր հետևանքներից է հրդեհների բռնկումը: Ըստ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնկվել է 6 հրդեհ, և այրվել է 168.61հա այլ բուսածածկ տարածք:

Գործողություն

Առաջարկում ենք 2023-2030 թթ. գործողությունների ազգային ծրագրի միջոցառումների ցանկում նախատեսել միջոցառում անտառում զբոսաշրջության կազմակերպման հստակ պահանջների և պայմանների մասին:

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքի տարածքում շահագործվում են Դիլիջանի ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրը, Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1Մ հորատանցքը, որոնք Դիլիջանի առողջարանային տուրիզմի զարգացման կարևոր ռեսուրսն են:

Համայնքում շահագործվում է Հովքի ավազակոպիճային հանքը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ 2015 թ. հունիսի 23-ի ՀՕ-103-Ն օրենքի հոդված 5-ի 1 կետի, 1) ենթակետի՝ Դիլիջան քաղաքում և հարակից տարածքներում արգելվում է հանքագործական արդյունաբերության գործունեությունը՝ բացառությամբ կավի, ճենակավի և ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի:

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

Ըստ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների 2022-2026թթ. կառավարման պլանի՝ աղբավայրում տարեկան կուտակվում է 17733 խմ կենցաղային թափոն: Դիլիջան համայնքի աղբավայրը գտնվում է քաղաքից 12-13 կմ հեռավորության վրա՝ Հաղարծին բնակավայրում, զբաղեցնում է 32.77 հա տարածք:[20] Այն շահագործվում է 1999 թ-ից:

«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում և լուսավորություն» ՀՈԱԿ-ը

[20] http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Tarekan%202021.pdf

աղբավայրում կատարում է հակահրդեհային կանխարգելիչ աշխատանքներ հողածածկման տեսքով:

«ԷկոԼուր»-ի թիմը տեղազննությամբ պարզեց, որ Հաղարծինի աղբավայրում աղբը տարերայնորեն թափած էր աղբավայր տանող ճանապարհի երկայնքով, այն պարսպապատ չէր, աղբն ինքնայրվում էր, աղբավայրի տարածքում արածում էին ընտանի կենդանիներ: Աղբավայրն օրինակելի և կառավարելի չէ:

Նկար 12. Ընտանի կենդանիներ Հաղարծինի աղբավայրի տարածքում

Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հայեցակարգը[21], ինչպես նաև աղբահանության իրականացման սանիտարական սխեման:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման[22] 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի նախատեսվում է ամբողջ մարզի և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր:

Համայնքի համար, բացի աղբահանությունից, կարևոր է նաև Աղստև գետի ավազանի՝ աղբով և կոյուղաջրերով աղտոտվածության խնդիրը: Չնայած նրան, որ ԱՄՆ ՄՋԳ, ՄԱՋԾ-ի, «Կոկա-Կոլա» կորպորացիայի Եվրասիայի և Մերձավոր Արևելքի բաժանմունքի և Դիլիջանի քաղաքապետարանի միջոցներով իրականացվել են հոսքաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ Աղստև գետի վրա, առ այսօր հոսքաջրերի մաքրման կայանը չի աշխատում:

[21] http://tavush.mtad.am/files/comm_docs/9/697/56131.pdf
[22] https://www.irtek.am/views/act.aspx?aid=92592

Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հայեցակարգը[23], ինչպես նաև աղբահանության իրականացման սանիտարական սխեման:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման[24] 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի նախատեսվում է ամբողջ մարզի և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել Եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով Դիլիջանի ՏԻՄ-ն աղբավայր շահագործելու լիազորություն չունի: Նույն օրենքով ՏԻՄ-ի համար սահմանված լիազորությունները բավարար չեն թափոնների կառավարումը լիարժեք կազմակերպելու և վերահսկելու համար: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով թափոնների գործածության ոլորտում ՏԻՄ-երի իրավասություններն են.

ա) հսկողություն աղբահանման նկատմամբ

բ) տարածքների սանիտարական մաքրման սխեմաների կազմում

գ) չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացում

դ) ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպում

ե) համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանն աջակցություն:

Խնդիր

Բնապահպանական տեսանկյունից աղբավայրը գտնվում է անմխիթար վիճակում: Աղբավայրը չունի պարիսպ, չունի պահակակետ: Աղբավայրում առկա են բազմաթիվ այրման օջախներ:

Աղբահանության լիարժեք կազմակերպման համար ՏԻՄ-ը չունի բավարար ֆինանսական և տեխնիկական միջոցներ: Մասնավոր հատվածի կողմից չկա հետաքրքրվածություն բարձրորակ ծառայություններ մատուցելու համար:

ՏԻՄ-ը «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով լիազորություն չունի շահագործելու աղբավայրերը:

Գործողություններ

[23] http://tavush.mtad.am/files/comm_docs/9/697/56131.pdf
[24] https://www.irtek.am/views/act.aspx?aid=92592

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարել՝ ընդլայնելով և ամբողջացնելով ՏԻՄ-ի լիազորություններն աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման գործում:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ հստակեցնելով ՏԻՄ-երի կողմից աղբավայրերի կառավարման գործընթացում մասնակցությունը և պատասխանատվությունը:

Գործող աղբավայրը համապատասխանեցնել սանիտարական չափորոշիչներին:

7. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դիլիջան համայնքը զբաղեցնում է 63316.93 հա տարածք: Բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված հողերը 1766.59 հա են: Համայնքի տարածքի 37%-ը (23567.03 հա) զբաղեցնում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը կազմում են համայնքի տարածքի 0,002 %-ը (135.94 հա): Նույնքան՝ 0,002% (134.51հա) տարածք էլ զբաղեցնում են էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողերը:



Նկար 13. Հողերի տեսակների տվյալները՝ ըստ Դիլիջան համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի, «Դիլիջան» ազգային պարկի տարածքի տվյալը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության

«Դիլիջան» ազգային պարկի խնդիրներից է հողերի վարձակալության պայմանագրերի պայմանների կատարումը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեում կատարվել են ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ստեղծելով նոր վարչություն վարձակալական պայմանագրերի

պայմանների կատարման համար։

Ըստ Անտառային կոմիտեի՝[25] անտառային տարածքների վարձակալության պայմանագրերով նախատեսված պահանջները մեծամասամբ չեն կատարվել։

Ազգային պարկում անկազմակերպ զբոսաշրջության պատճառով աղտոտվում է պարկի տարածքը, վնասվում կենսաբազմազանությունը, բռնկվում են հրդեհներ։

Գործողություն
Անհրաժեշտ է պետություն-համայնք փոխգործակցությամբ մշտադիտարկել «Դիլիջան» ազգային պարկի տարածքում հողերի վարձակալության պայմանագրերի պատշաճ կատարումը՝ օգտագործելով նորաստեղծ վարչության լիազորությունները։

8. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ

2022թ. համայնքային բյուջեի եկամտային մասը կազմել է 1 միլիարդ 335 միլիոն 379 հազար 200 դրամ, ծախսային մասը՝ 1 միլիարդ 836 միլիոն 292 հազար 500 դրամ։ Այսպիսով, համայնքի բյուջեի ծախսային մասը 500 միլիոն 913 հազար 300 դրամով ավելի է եկամտային մասից։

ՀՀ համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2020թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ Դիլիջան համայնքին հատկացումների ընդհանուր ծավալը կազմել է 681 475,5 հազ. դրամ[26]։

9. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԸ

2022 թ. բավարարվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերի հայտերը.

	Ծրագրի նկարագրությունը	**ԿՓ ուղղվածությունը**
1.	Դիլիջան համայնքի «Հովհ. Շարամբեյանի անվ. գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 232424918 ՀՀ դրամ	Մեղմում
2.	Դիլիջան համայնքի Մյասնիկյան 37/2	Հարմարվողականություն

[25] https://www.ecolur.org/hy/news/forest/14869/

[26] http://91.221.229.155/hy/finansakanhamaha8tecum/

	հասցեից մինչև Մյասնիկյան 117/4 ճանապարհահատվածի հիմնանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 723847640 ՀՀ դրամ	
3.	Դիլիջան համայնքի Կամարինի 1 հասցեից Օրջոնիկիձե 57-Կամարինի 37 հասցեի ճանապարհահատվածի վերանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 206863810 ՀՀ դրամ	Հարմարվողականություն
4.	«Դիլիջան համայնքի Մյասնիկյան 52 հասցեում գտնվող մշակույթի պալատ» շենքի վերանորոգում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 283015100 ՀՀ դրամ	Մեղմում

2023 թ. բավարարվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերի հայտերը

	Ծրագրի նկարագրությունը	**ԿՓ ուղղվածությունը**
1.	Դիլիջան համայնքում տրանսպորտային երթուղիները սպասարկելու համար 2 հատ ավտոբուսների և կոմունալ տնտեսության սպասարկման համար 1 հատ աղբատար մեքենայի ձեռքբերում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 200300000 ՀՀ դրամ	Մեղմում
2.	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում թվով 24 կանգառների կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 58528490 ՀՀ դրամ	Հարմարվողականություն
3.	Դիլիջան համայնքի Դիլիջան բն. Մյասնիկյան 117/4 հասցեից մինչև Գայի 90 հասցեն ընկած հատվածի և Կալինինի 256 հասցեից մինչև Այգեստան 1/1 հասցեն ընկած հատվածի հիմնանորոգում ասֆալտապատմամբ, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 725558640 ՀՀ դրամ	Հարմարվողականություն
4.	Դիլիջան համայնքի թվով 6 ԲԲԸ-ների տանիքների հիմնանորոգում /Մյասնիկյան, Գետափնյա,	Մեղմում

	Շահումյան, Շամախյան փողոցներ/, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 115502048 ՀՀ դրամ	
5.	Դիլիջան համայնքի Հաղարծին բն. 2-րդ, 7-րդ, 10-րդ փող. Խաչարձան բն. 2-րդ, 3-րդ փող., Գոշ բն. Գոշ փող. Հովք բն. 1-ին փող. տուֆապատում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 319109620 ՀՀ դրամ	Հարմարվողականություն

2023թ. մայիսի 3-ի Դիլիջանի ավագանու N 348-Ա որոշմամբ՝[27] ավագանին համաձայնություն է տվել 2024թ. համար ՀՀ պետական բյուջեից Դիլիջան համայնքին հատկացվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները, ուղղորդել հետևյալ տնտեսական զարգացման ծրագրերին՝

Հ/Հ	Ծրագրի նկարագրությունը	**ԿՓ ուղղվածությունը**
1.	Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատում և մայթերի վերանորոգում	Հարմարվողականություն
2.	Դիլիջան համայնքի «Թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում	Մեղմում
3.	Դիլիջան քաղաքի օղակաձև այգու բարեկարգում և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում	Հարմարվողականություն
4.	Դիլիջան քաղաքի Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստև հատվածի սելավատարի հիմնանորոգում	Հարմարվողականություն
5.	Գոշ բնակավայրի խմելու ջրագծերի հիմնանորոգում և ջրաչափերի տեղադրում:	Հարմարվողականություն
6.	Հաղարծին բնակավայրում ջրաչափական դիտահորերի կառուցում և ջրաչափերի տեղադրում:	Հարմարվողականություն
7.	Հաղարծին բնակավայրի հանդիսությունների սրահի վերանորոգում	Մեղմում
8.	Խաչարձան բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի վերանորոգում:	Մեղմում
9.	Հովք բնակավայրում խմելու ջրագծերի ներքին ցանցի կառուցում և ջրաչափերի տեղադրում	Հարմարվողականություն

[27] https://www.dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=c39f2987-3252-42df-96c6-eba6e224efc3

10.	Թեղուտ բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի վերանորոգում	Մեղմում
11.	Աղավնավանք բնակավայրում ներգյուղական փողոցների տուֆապատում	Հարմարվողականություն
12.	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում /Գետափնյա 74, Շամախյան 2Ա, Օրջոնիկիձե 77, Գայի 84/	Մեղմում

Խնդիր

Դիլիջանի համար իրականացվող և նախատեսվող ծրագրերն առնչվում են ՀՀ կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, էներգախնայողության և էներգաարդյունավետության քաղաքականություններին: Սակայն այս ծրագրերը չեն ուղղվում բնակիչների սոցիալական կարիքների բավարարմանը և կրում են հասարակական ընդհանուր բնույթ:

Գործողություն
Տնային տնտեսությունների վրա կլիմայական և էներգետիկ սուբվենցիոն ծրագրերի դրական ազդեցությունը հնարավոր է ապահովել կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության հաղթահարման մեխանիզմների ներդրման շնորհիվ՝ օգտագործելով եվրոպական մոտեցումները, կլիմայի և կայուն էներգետիկայի սոցիալական, էկոլոգիական միջոցառումների պլանը:

10. ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դիլիջան համայնքի 2022-2027թթ. զարգացման 7 ծրագրերից 6-ի իրականացումը առնչվում է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը և մեղմմանը:[28] Այդ ծրագրերն են.

Հ/Հ	Ծրագրի նկարագրությունը	**Բյուջե, ՀՀԴ**	**ԿՓ ուղղվածությունը**
1.	«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգում	283 015 100	Մեղմում
2.	«Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգում	400 000 000	Մեղմում

[28] https://www.dilijancity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects

3.	Արևային ՖՎ կայանների կառուցում	45 000 000	Մեղմում
4.	Դիլիջան համայնքի Մյասնիկյան 37/2հասցեից մինչև Մյասնիկյան 117/4 ճանապարհահատվածի հիմնանորոգում	660 000 000	Հարմարվողականություն
5.	Դիլիջան համայնքի Կամարինի 1 հասցեից Օրջոնիկիձե 57-Կամարինի 37հասցեի ճանապարհահատվածի հիմնանորոգում	290 000 000	Հարմարվողականություն
6.	Դիլիջան համայնքի 11 բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացում	669 876 147	Մեղմում
	ԸՆԴԱՄԵՆԸ	2 347 891 247	

Իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Դիլիջանի ներկայիս սուբվենցիոն և զարգացման ծրագրերի որոշակի մասը թեև ունի կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ուղղվածություն, սակայն դրանք չեն դիտարկվել, գնահատվել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից:

11.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ Դիլիջան համայնքը խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ:
- ✓ Դիլիջանը, ունենալով բարենպաստ բնական միջավայր, էներգախնայողության և էներգաարդյունավետության զարգացման մեծ պոտենցիալ, կարող է վերականգնել իր մասնակցությունը ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին և ստանալ փորձագիտական աջակցություն՝ ուժեղացնելու կարողությունները և մշակելու ռազմավարություններ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ծրագրերի իրականացման համար:
- ✓ Դիլիջանի համար իրականացվող և նախատեսվող սուբվենցիոն ծրագրերն որոշակիորեն առնչվում են ՀՀ կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, էներգախնայողության և էներգաարդյունավետության քաղաքականություններին: Սակայն դրանք պահանջում են ավելի հստակ գնահատականներ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման տեսանկյունից:

- ✓ Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման համար պահանջվող ներդրումները հնարավոր չէ ապահովել համայնքային բյուջեի սուղ միջոցների հաշվին:
- ✓ Համայնքում հանրային շենքերում արևային ինքնավար կայանների տեղադրման ծրագրի իրականացումը կարող է երկարաժամկետ հեռանկարում ապահովել անվճար էլեկտրաէներգիայի ստացում և ֆինանսական միջոցների տնտեսում:
- ✓ Կլիմայական և կանաչ էներգետիկ ուղղվածությամբ զարգացման համար համայնքը կարիք ունի միջազգային դոնոր կազմակերպությունների և «կանաչ» հիմնադրամների ֆինանսական և խորհրդատվական աջակցության:
- ✓ Կրթական բարձր մակարդակ ունեցող կանանց ներուժը լիարժեք չի օգտագործվում համայնքային խնդիրների կարգավորման համար:
- ✓ Առկա է սպառողական վերաբերմունք անտառի նկատմամբ: Անտառի խնդիրը և դրան փոխկապակցված կլիմայի փոփոխության խնդիրը, որոնք անմիջականորեն ազդեցություն ունեն Դիլիջան համայնքի վրա, չի արծարծվում Դիլիջան համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրում:
- ✓ Համայնքի բնակչության կողմից սպառվող վառելափայտի ծավալը հաշվարկված չէ:
- ✓ Դիլիջանի անտառների հատումները, հրդեհները, չկարգավորվող զբոսաշրջությունը, ծառերի հիվանդությունները, անտառային հողերի զավթումը հանգեցրել են անտառային սաղարթի փոփոխությունների: Դա իր հերթին հանգեցնում է ջերմոցային գազերի կուտակման ունակության կրճատման և կլիմայի փոփոխության ակտիվ դրսևորումների:
- ✓ Զբոսաշրջության զարգացումն ուղեկցվում է ԲՀՊՏ-ի նկատմամբ ճնշումներով, անտառային տարածքների զավթմամբ և կառուցապատմամբ: Ծանր հետևանքներից է մարդածին հրդեհների բռնկումը:
- ✓ Համայնքի բնակավայրերում զբոսաշրջության համաչափ զարգացման համար անհրաժեշտ է ենթակառուցվածքների բարելավում:
- ✓ Դիլիջանի փայտամշակման ձեռնարկություններն օգտագործում են նաև «Դիլիջան» ազգային պարկից դուրս բերվող փայտանյութը:
- ✓ Փայտամշակման փոքր արտադրությունների նկատմամբ վերահսկողությունը պահանջում է մեծ ռեսուրսներ:
- ✓ Բնապահպանական տեսանկյունից համայնքի աղբավայրն անմխիթար վիճակում է: Հստակ չէ Դիլիջանի աղբավայրում տարեկան կուտակվող աղբի ծավալը և կազմը, հնարավոր չէ աղբավայրից արտանետվող ջերմոցային գազերի հստակ հաշվարկ կատարել:
- ✓ Դիլիջանի տարածքում ակտիվ սողանքներն առաջացնում են ենթակառուցվածքների զարգացման և սոցիալական խնդիրներ, համայնքի բնակչության անվտանգության սպառնալիք են:

- ✓ Համայնքում գործող փոքր ՀԷԿ-երը ստեղծում են խնդիրներ Աղստև, Գետիկ, Նորգետիկ, Խաչարձան գետերի էկոհամակարգերի համար, խախտում են «Դիլիջան» ազգային պարկի պահպանման ռեժիմը, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 17-ի և 20-ի պահանջները:
- ✓ Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը խիստ կախված է կլիմայական պայմաններից:
- ✓ Գործող բիզնեսի՝ համայնքի նկատմամբ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մակարդակը ցածր է:
- ✓ էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը ցածր է:
- ✓ Աղստև գետն ունի աղտոտվածության 5-րդ դաս:

Համայնքի ուժեղ կողմեր

- Անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայություն, տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման հնարավորություններ
- Միջազգային և հանրակրթական հեղինակավոր կառույցների առկայություն
- Պատմամշակութային արժեքների և բնության հուշարձանների առկայություն
- Գազաֆիկացված բնակավայրեր
- Ժամանակակից պահանջներին համապատասխան հյուրանոցների և ռեստորանների ցանց
- Խմելու և հանքային բնական ջրերի աղբյուրներ

12. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՏԻՄ-ԻՆ

1. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման տրամաբանության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում համայնքի տարածքում գործող վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայաններ շահագործող ընկերությունների հետ կնքել համագործակցության պայմանագրեր համայնքային էներգախնայողությանն ու կլիմայի հարմարվողականությանն ուղղված ծրագրերի իրականացման համար ընկերությունների կողմից մասհանումների վերաբերյալ:

2. Էներգետիկ աղքատության կրճատման, կլիմայական փոփոխությունների դիմակայմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացմանն օժանդակելու նպատակով համայնքային կառույցում ստեղծել խորհրդատվական բնույթ կրող միավորներ, էներգետիկ կառավարչի հաստիք: Աշխատակազմում ձևավորել ֆոնդ՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար տարվող աշխատանքները մասնագիտական կառույցներին պատվիրակելու համար:

3. Համայնքի զարգացման հնգամյա և սուբվենցիոն ծրագրերը մշակելիս հաշվի առնել կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության և

վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության տեղայնացման կարևորությունը, ՄԱԿ-ի կայուն զարգացման կոնցեպտը և բնակչության իրական կարիքները, համայնքում սոցիալական արդարության ու էներգամատչելիության ապահովումը, այդ միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացում ապահովել հանրության բավարար մասնակցություն։

4. Ջրամատակարարման, հատկապես ոռոգման համակարգերում ներդնել առաջատար և խնայողական համակարգեր։
5. Ընդլայնել հակակարկտային կայանների համակարգերի ցանցը։
6. Տանել աշխատանքներ ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու գործընթացի վերսկսման ուղղությամբ և այդ նպատակով փորձագիտական աջակցություն ստանալու, կարողությունների ուժեղացման և ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ծրագրերի իրականացման համար համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ։
7. Կազմել Դիլիջան համայնքի էներգաարդյունավետության և էներգախնայողության կառավարման պլան և կիրարկել այն։
8. Դիլիջան համայնքում ներդնել «Կանաչ տրանսպորտ» կոնցեպտը։
9. Խրախուսել թեթև արդյունաբերական ենթակառուցվածքների ներդրումը, էկոգյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը։
10. Ուժեղացնել համայնք - «Դիլիջան» ազգային պարկ համագործակցությունը բնության համատեղ պահպանման համար։
11. Նախապատրաստել հիմքեր ՀՀ կառավարության 2017 թ. նոյեմբերի 23-ի N49 արձանագրային որոշման շրջանակներում նախատեսվող կոշտ կենցաղային թափոնների կառավարման աղբավայրի ծառայություններին ինտեգրվելու նպատակով։
12. Էներգախնայողության և կլիմայական քաղաքականությունների վերաբերյալ կազմակերպել և իրականացնել իրազեկման միջոցառումներ համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, բնակչության համար։
13. Աղստև գետի հունի մաքրման աշխատանքների կազմակերպման համար տանել հետևողական աշխատանքներ, գետն աղտոտող կարգազանց բնակիչների նկատմամբ կիրառել ՏԻՄ օրենքով լիազորված վարչական տույժեր։
14. Համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավման, եկամուտների բարելավման համար համայնքի տարածքում հատկացնել գյուղմթերքի վաճառքի կիրակնօրյա շուկաների կազմակերպման տարածքներ գյուղամթերքների իրացման խրախուսման նպատակով, ապահովել շուկաների գովազդը, այս հարցում ֆինանսական աջակացություն ստանալու համար դիմել միջազգային դոնոր կազմակերպություններին։
15. Բարձրացնել կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում և կլիմայական և էներգետիկ ծրագրերում։

Հավելված 1

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված միջոցառումների օրինակներ *Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներն ուղղված են կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմմանը և դրանց նկատմամբ հասարակության դիմակայունության բարձրացմանը:*	**Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ** *Կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներն ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը:*
1. Բնական աղետների ռիսկերի կառավարման պլանների մշակում ու իրականացում 2. Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետության բարելավում, կառավարման ենթակառուցվածքների զարգացում 3. Համայնքային անտառների, խոնավ տարածքների և գետերի ափամերձ տարածքների պաշտպանություն 4. Կայուն օրգանական գյուղատնտեսության զարգացում՝ մշակաբույսերի սորտերի փոփոխություն, ոռոգման ժամանակակից մեթոդների կիրառում, ջրամբարաշինություն 5. Կայուն քաղաքաշինություն՝ կանաչ տարածքների ավելացում 6. Առողջապահական համակարգերի կարողությունների զարգացում՝ կլիմայի փոփոխության հետ կապված հիվանդությունների կանխարգելման և կառավարման միջոցառումների մշակում, իրականացում 7. Էներգախնայողության նոր տեխնոլոգիաների զարգացում, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում 8. Միջազգային համագործակցության ընդլայնում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների մշակման և իրականացման, փորձի փոխանակման և տեխնոլոգիաների	1. Հանածո վառելիքի օգտագործման նվազեցում, վերականգնվող էներգիայի աղբյուրների տեսակարար կշռի ավելացում համայնքային և անհատական սեկտորում 2. Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում համայնքային շենքերում և ծառայությունների և տնային տնտեսություններում /շենքերի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ ջեռուցման և հովացման համակարգերի օգտագործում, էներգախնայողություն/ 3. Օրգանական թափոնների կոմպոստացում, սննդային թափոնների նվազեցում, անտառահատված տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների բացառում 4. Գյուղատնտեսական թափոններից բրիկետների արտադրության կազմակերպում 5. Անասնապահության թափոններից օրգանական պարարտանյութերի արտադրություն 6. Անտառահատումների կանխում, անտառվերականգնում, անտառապատում 7. Թափոնների տեսակավորում և վերամշակում, աղբավայրերից ջերմոցային գազերի արտանետումների վերահսկում 8. Հեծանիվների և հետիոտնի համար ենթակառուցվածքների զարգացում,

փոխանցմանն ուղղված գործողությունների իրականացում 9. Համայնքի իրազեկման բարձրացում կլիմայի փոփոխության և դրա ազդեցության վերաբերյալ, տեղեկատվության տարածում 10. Գյուղատնտեսական արտադրությունում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների իրականացում 11. Անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիաների ներդրում 12. Համայնքում հեղեղումների և սելավների վաղ ազդարարման համակարգերի ներդրում	էլեկտրական մեքենաների և էկոլոգիապես մաքուր այլ տրանսպորտային միջոցների օգտագործում: 9. Կլիմայի փոփոխության մեղմման մասին հանրության իրազեկության բարձրացում

Հավելված 2

Դիլիջան համայնքի փոքր ՀԷԿ-երի ցուցանիշները

հ/հ	Ընկերության անվանումը	ՓՀԷԿ-ի անվանումը	Լիցենզիայի համարը	Լիցենզիայի գործողության ժամկետը	Հզորությունը, կվտ	Էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը, մլն.կվտ/ժ	Ջրաղբյուրը	Դերիվացիայի երկարությունը. մ
1.	«ԷԼ ԵՆ ԷՔՍ» ՍՊԸ	«Աղստև-1»	383	08.12.25	2825	8,71	Աղստև գետ	2465+2963
2.	«ԳՈՇ ՀԷԿ» ՍՊԸ	«Գոշ»	298	24.09.2023	364	0,63	Նորգետիկ գետ	2990
3.	«ԳՈՇ ՀԷԿ» ՍՊԸ	«Խաչարձան»	341	23.12.2024	650	1,13	Խաչարձան գետ	2*1740

4.	«ԷՅ ԷՆԴ Ի ՋԻ ՍԹԱՅԼ» ՍՊԸ	«Գետիկ ՓՀԷԿ-4»	525	04.12.2029	3330	5,37	Աղստև գետի Գետիկ վտակ	1010,5